

	ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ Հայաստանի ազգային ագրարային համալսարան AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ	Միջազգային գիտական պարբերական ISSN 2579-2822	
--	---	---	--

Կայքէջ՝ anau.am/hy/teghkekagir

ՀՏԴ 633.11:632.51(479.25)

ՀԱՅԱՎԱՏԻԿԻ ՑԱՆՔԵՐԻ ՄՈԼԱԽՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԻՐԱԿԻ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ

Ա.Յ. Հարությունյան

ՀՀ Ազգային ժողով

Ռ.Ն. Նազարյան գ.գ.թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ա.Գ. Ահարոնյան գ.գ.դ.

Մենդալթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

ashharyt@mail.ru, rudiknazaryan@yahoo.com, arkadi.aharonyan@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝

*հացահատիկ,
մոլախոտ,
վնասակարություն,
միաշաքիլ,
երկշաքիլ*

Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Մոլախոտվածության վիճակը պարզելու համար 2014-2016 թթ. Շիրակի հարթավայրի ութ տարբեր համայնքներում կատարվել են աշխանացան, գարնանացան ցորենի և գարու ցանքերի մոլախոտվածության խտության, դրա փոփոխության հաշվառումներ: Արդյունքում գրանցվել է մոլախոտվածության բարձր աստիճան:

Քանի որ հողի համակարգված մշակման արդյունքում մոլախոտերի քանակը չի հասնում նվազագույնի, ուստի անհրաժեշտ է կիրառել հակամոլախոտային պատրաստուկներ:

Նախաբան

Արտադրամիջոցների, ինչպես նաև հողի սեփականաշնորհման հետևանքով հողերի մասնատումը, մեքենայական աշխատանքի, հակամոլախոտային և նոր տեխնոլոգիաների սահմանափակ կիրառումն ամենուրեք հանգեցրեցին մոլախոտվածության աճի և գյուղացիական տնտեսությունների, հատկապես հացահատիկի ցանքերում դրա համատարած վնասակարության (Ա.Գ. Ահարոնյան և ուրիշ., 2015):

Հացահատիկի բարձր և կայուն բերք ստանալու համար անհրաժեշտ է ապահովել սնման և զարգացման լավագույն պայմաններ: Սակայն վեգետացիայի ողջ ընթացքում հացահատիկի աճին խանգարում են բազմաթիվ մոլախոտային բույսեր, որոնք առավել արագ են տարածվում հատկապես նպաստավոր պայմաններում: Մոլախոտերի պատճառած վնասը նվազագույնի

հասցնելու և պայքարի համապատասխան միջոցառումներ մշակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել դրանց կենսաբանական առանձնահատկությունները, տվյալ դաշտի մոլախոտվածության աստիճանը և բնույթը (Ռ.Ռ. Մանուկյան, Ֆ.Յ. Կարապետյան, 2011, Т.И. Баздырев, 2004):

Նյութը և մեթոդները

Մոլախոտվածության վիճակը պարզելու համար 2014-2016 թթ. Շիրակի հարթավայրի ութ տարբեր համայնքներում կատարվել է վեգետացիայի ընթացքի երեք հաշվառում. ընդգրկվել են աշխանացան և գարնանացան ցորենի, ինչպես նաև գարու ցանքերը: Առաջին հաշվառումը կատարվել է հացահատիկի թփակալուսից հետո և տևել է մինչև խողովակալման սկիզբը, երկ-

րորդը կատարվել է մեկ ամիս հետո, երրորդը՝ բերքահավաքի նախօրեին:

Բոլոր դաշտերում մոլախոտերի հաշվահարթակների մակերեսը կազմել է 1 մ², իսկ կրկնությունների թիվն ըստ ցանքատարածության՝ 10-20 հատ:

Հաշվահարթակները դաշտում տեղադրվել են ռանդոմիզային (պատահական) մեթոդով:

Հաշվառման արդյունքները ճշգրիտ ներկայացնելու համար մոլախոտերը գրանցվել են ըստ բուսաբանական կազմի (միաշաքիլ, երկշաքիլ) և կյանքի տևողության (սակավամյա, բազմամյա):

Մշակաբույսերի դաշտերում հաշվառումները կատարվել են տարբեր գիտնականների կողմից ընդունված

մեթոդներով (Ե.Ա. Доспехов, 1919, А.М. Лыков, А.М. Тютников, 1974):

Առավել տարածված մոլախոտերի լատիներեն անվանումները ճշգրտվել են ըստ գրականության աղբյուրների (Գ.Խ. Աղաջանյան, 1957, Պ.Ա. Ղանդիլյան, Ա.Ե. Հովսեփյան, Լ.Բ. Պետրոսյան, 1975):

Արդյունքները և վերլուծությունը

Ըստ հետազոտությունների՝ հացահատիկի դաշտերում առավել տարածված են հետևյալ մոլախոտերը.

- միաշաքիլ՝ դաշտավլուկ միամյա (*Poa annua* L.), խրփուկ սովորական (*Avena fatua* L.), խոզանուկ օղակածն (*Setaria verticillat* L.), խոզանուկ կանաչ (*Setaria*

Աղյուսակ 1. Աշնանացան ցորենի ցանքերի մոլախոտավածության խտության փոփոխությունն ու հարաբերակցությունն ըստ դասերի, 2014-2016 թթ.*

Համայնքներ	Նախորդ մշակաբույսեր	Հաշվառում	Մոլախոտերի միջին քանակը, հատ/մ ²				Հարաբերակցությունն ըստ դասերի, %	
			սակավամյա		բազմամյա		միաշաքիլ	երկշաքիլ
			միաշաքիլ	երկշաքիլ	միաշաքիլ	երկշաքիլ		
Ախուրյան	Աշնանացան ցորեն	I	11	16	4	6	40	60
		II	14	20	4	7	40	60
		III	9	12	3	3	44	56
Կառնուտ	Աշնանացան ցորեն	I	13	22	2	5	44	56
		II	19	35	3	8	34	66
		III	10	14	1	3	39	61
Ազատան	Աշնանացան ցորեն	I	8	25	3	7	26	74
		II	16	38	5	7	32	68
		III	6	14	3	3	32	68
Բենիամին	Գարնանացան ցորեն	I	7	20	3	6	28	72
		II	14	29	5	6	35	65
		III	5	16	2	3	27	73
Արևիկ	Աշնանացան ցորեն	I	10	33	3	5	25	75
		II	28	42	3	6	39	61
		III	11	15	1	2	41	59
Շիրակ	Գարնանացան ցորեն	I	15	28	0	3	33	67
		II	26	36	1	5	40	60
		III	10	11	1	2	46	54
Մայիսյան	Աշնանացան ցորեն	I	18	25	3	7	40	60
		II	22	29	5	7	43	57
		III	7	6	3	3	53	47
Մարմաշեն	Կարտոֆիլ	I	11	16	3	6	39	61
		II	14	27	3	8	33	67
		III	8	12	1	3	37	63

* Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2. Գարնանացան ցորենի ցանքերի մոլախոտվածության խտության փոփոխությունն ու հարաբերակցությունն ըստ դասերի, 2014-2016 թթ.*

Համայնքներ	Նախորդ մշակաբույսեր	Հաշվառում	Մոլախոտերի միջին քանակը, հատ/մ ²				Հարաբերակցությունն ըստ դասերի, %	
			սակավամյա		բազմամյա		միաշաբլի	երկշաբլի
			միաշաբլի	երկշաբլի	միաշաբլի	երկշաբլի		
Ախուրյան	Ճակնդեղ	I	16	14	0	4	47	53
		II	21	27	2	6	41	59
		III	3	10	1	2	25	75
Կառնուտ	Աշնանացան ցորեն	I	14	22	3	7	40	60
		II	25	36	3	8	39	61
		III	17	10	1	3	58	42
Ազատան	Աշնանացան ցորեն	I	19	30	0	5	35	65
		II	16	35	3	6	32	68
		III	5	14	3	3	32	68
Բենիամին	Աշնանացան ցորեն	I	12	26	3	5	33	67
		II	18	33	3	7	34	66
		III	4	14	1	3	23	77
Արևիկ	Ճակնդեղ	I	15	20	0	4	47	53
		II	13	25	0	6	50	50
		III	5	9	0	2	55	45
Շիրակ	Կարտոֆիլ	I	17	18	3	5	46	54
		II	16	24	3	7	38	62
		III	10	6	2	2	60	40
Մայիսյան	Կարտոֆիլ	I	19	20	3	7	65	35
		II	15	28	5	7	66	34
		III	6	12	3	3	56	44
Մարմաշեն	Աշնանացան ցորեն	I	14	22	4	5	40	60
		II	20	30	5	5	42	58
		III	11	17	2	3	39	61

* Կազմվել է հեղինակների կողմից:

viridis L.), հավակորեկ սվոդրական (Echinochloa crus galli L.), հալֆա փոքր (Eragrostis minor Host.), ցորենուկ անքիստ (Bromus inermis Leyss), հողմախոտ ընդհատ (Apera interrupta L.), աշորա դաշտամոլախոտային (Secale segetate roshev), այծակն գլանաձև (Aegilops cylindrica Host.), աղվեսագի դաշտային (Alopecurus myosuroides Huds.), ժիտնյակ ցորենի (Agropyrum triticum G.), որոմ կարծր (Lolium rigidum G.), սեզ սողա-ցող (Agropyron repens L.),

- երկշաբլի՝ բողկուկ դաշտային (Raphanus raphanistrum L.), թելուկ սվոդրական (Chenopodium album L.), թալ վարդագույն (Atriplex poseum L.), իշամառլ դաշտային (Sonthus arvensis L.), հավակատար սվոդրական (Amaranthus retroflexus L.), մատիտեղ թռչնի (Polygonum aviculare L.), շնկոտեն դաշտային (Thlaspis arvensis L.), պատատուկ դաշտային (Convolvulus

arvensis L.), գեղավեր դաշտային (Cirsium arvense L.), աղբակոտեն սվոդրական (Lepidium draba L.), դառնափուշ սվոդրական (Xanthium strumarium L.), դելֆին արևելյան (Consolidea orientalis L.), երիցուկ անհոտ (Chamaemelum inodorum L.), հնդկացորեն պատատուկային (Fagopyrum convolvulus L.), մանանեխ դաշտային (Brassica sinapistrum Boiss), վիկ թավոտ (Vicia vilosa Roth.), տերեփուկ կապույտ (Centaurea cyanus L.):

Մոլախոտվածության խտությունը, դրա փոփոխությունը վեգետացիայի ընթացքում և հարաբերակցությունն ըստ դասերի ամփոփված են աղյուսակներ 1-3-ում:

Աշնանացան ցորենի բոլոր դաշտերն ունեն բարձր մոլախոտվածություն (աղ. 1): Տարածված են սակավամյա, բազմամյա, միաշաբլի և երկշաբլի մոլախոտերի բազմաթիվ տեսակներ:

Աղյուսակ 3. Գարնանացան գարու ցանքերի մոլախոտվածության խտության փոփոխությունն ու հարաբերակցությունն ըստ դասերի, 2014-2016 թթ.*

Համայնքներ	Նախորդ մշակաբույսեր	Հաշվառում	Մոլախոտերի միջին քանակը, հատ/մ ²				Հարաբերակցությունն ըստ դասերի, %	
			սակավամյա		բազմամյա		միաշաքիլ	երկշաքիլ
			միաշաքիլ	երկշաքիլ	միաշաքիլ	երկշաքիլ		
Ախուրյան	Կարտոֆիլ	I	26	11	0	7	52	48
		II	48	22	3	9	64	36
		III	13	10	2	3	54	46
Կառնուտ	Կարտոֆիլ	I	23	15	3	5	54	46
		II	39	21	5	5	63	37
		III	7	8	3	2	50	50
Ազատան	Ճակնդեղ	I	30	13	5	7	64	36
		II	36	15	5	9	63	37
		III	10	10	3	3	50	50
Բենիամին	Աշնանացան ցորեն	I	23	22	3	7	48	52
		II	29	27	3	9	47	53
		III	5	13	1	2	29	71
Արևիկ	Աշնանացան ցորեն	I	22	21	0	4	47	53
		II	32	26	0	6	50	50
		III	16	11	0	2	55	45
Շիրակ	Աշնանացան ցորեն	I	36	13	4	6	68	32
		II	48	19	3	8	65	35
		III	13	6	2	3	62	38
Մայիսյան	Աշնանացան ցորեն	I	32	12	3	7	65	35
		II	44	15	5	10	66	34
		III	10	7	3	3	56	44
Մարմաշեն	Գարնանացան ցորեն	I	27	10	5	5	68	32
		II	46	14	5	6	72	28
		III	9	6	3	3	57	43

* Կազմվել է հեղինակների կողմից:

Անկախ նախորդ մշակաբույսերից՝ վեգետացիայի ընթացքում գրանցվել է ոչ կայուն մոլախոտվածություն:

Գրեթե բոլոր համայնքների դաշտերում երկշաքիլներն ավելի շատ են, քան միաշաքիլները: Առավել բարձր մոլախոտվածություն նկատվել է Ազատան և Բենիամին համայնքների դաշտերում:

Ախուրյան, Բենիամին համայնքներում գարնանացան ցորենի ցանքերում 3-րդ հաշվառման ժամանակ գերակշռել են երկշաքիլ մոլախոտերը (աղ. 2): Աշնանացան և գարնանացան ցորենի ցանքերում բարձր մոլախոտվածություն է գրանցվել 2-րդ հաշվառման ժամանակ, քանի որ 1-ին հաշվառման ժամանակ դեռևս ծլած չեն լինում որոշ մոլախոտեր, իսկ 3-րդ

(բերքահավաքի նախօրեին) հաշվառման ժամանակ ավարտվում է մոլախոտերի մեծ մասի վեգետացիան:

Գարնանացան գարու դաշտերում, անկախ նախորդ մշակաբույսից, հիմնականում գերակշռում են միաշաքիլ մոլախոտերը (աղ. 3): Թեև նախորդ տարում կարտոֆիլի և ճակնդեղի դաշտերում կատարվել է երեք միջառային մշակում, այնուամենայնիվ միաշաքիլ մոլախոտերը միշտ գերակշռել են: Նշված հարաբերակցությունը գրանցվել է հիմնականում Մարմաշեն, Շիրակ և Մայիսյան համայնքների դաշտերում: Միաշաքիլներով և երկշաքիլներով մոլախոտվածությունը գրեթե համահավասար է եղել միայն Արևիկ համայնքում:

Եզրակացություն

Շիրակի հարթավայրի հացահատիկի ցանքերում գրանցվել է բարձր մոլախոտվածություն, ընդ որում՝ միաշաքիլ և երկշաքիլ դասերին պատկանող սակավամյա ու բազմամյա կենսախմբերի մոլախոտերի քանակը վեգետացիայի ընթացքում փոփոխվում է: Հողի համակարգված մշակման արդյունքում մոլախոտվածությունը չի հասնում նվազագույնի, ուստի պահանջվում է կիրառել հակամոլախոտային պատրաստուկներ:

Գրականություն

1. Աղաջանյան Գ.Խ. Հայաստանի մոլախոտային բուսականությունը և պայքարը նրա դեմ. - Հ. 1. - Եր.: ԳԱ հրատարակչություն, 1957. - 422 էջ:
2. Ահարոնյան Ա.Գ. և ուրիշ. Հերբալոգիա / Ա.Գ. Ահարոնյան, Ա.Խ. Հակոբյան, Ի.Ս. Ծերեթելի, Գ.Ա. Խաչատրյան. - Եր.: Նահապետ, 2015. - 216 էջ:
3. Ղանդիլյան Պ.Ա., Հովսեփյան Ա.Ե., Պետրոսյան Լ.Բ. Բուսաբանական բառարան. - Եր.: Հայաստան, 1975. - 260 էջ:
4. Մանուկյան Ռ.Ռ., Կարապետյան Ֆ.Յ. Երկրագործություն հողագիտության հիմունքներով. - Եր.: ՀՊԱՀ, 2011. - 218 էջ:
5. Баздырев Т.И. Защита сельскохозяйственных культур от сорных растений. - М.: Колос, 2004. - 328 с.
6. Доспехов Б.А. Методика полевого опыта. - М.: Колос, 1979. - 336 с.
7. Лыков А.М., Туликов А.М. Практикум по земледелию с основами почвоведения. - М.: Колос, 1974. - 190 с.

АННОТАЦИЯ**Степень засоренности зерновых посевов Ширакской равнины**

С целью выяснения ситуации с засоренностью сорняками в восьми различных общинах Ширакской равнины в 2014-2016 гг. были проведены расчеты густоты и динамики изменения засоренности посевов озимой, яровой пшеницы и ячменя. В результате зафиксирована высокая степень засоренности.

Поскольку систематизированная обработка земли не приводит к минимизации количества сорняков, необходимо применять препараты против них.

ABSTRACT**Weediness Rate in the Cereal Crop Sowings at the Shirak Valley**

In 2014-2016 the density of weediness in the sowings of winter, spring wheat and barley, as well as its dynamic changes were estimated in 8 various communities of the Shirak valley to determine the state of weediness as a result of which high rate of weediness was recorded.

Since systemized soil cultivation doesn't result in the decrease of weed amount it is necessary to apply anti-weed preparations.

Ընդունվել է՝ 01.07.2019 թ.
Գրախոսվել է՝ 10.10.2019 թ.